ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 29-ին, շորեքշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում նախագահեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձի առթիվ կատարված կառավարական մաղթանքին։

Գոհաբանական աղոթքին ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը։ Վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։

Կառավարական մաղթանքի ժամանակ, լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը կարդաց «ՎԱՍՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» գոհաբանական աղոթքը։

Կառավարական մաղթանքից հետո, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, կազմակերպվեց գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված օրվա ազգային-պետական մեծ տոնի նշանակությանը։

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվագով։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հանդես է գալիս տոնի ազգային նշանակության և խորհրդին նվիրված բացման խոսքով։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձին նվիրված բովանդակալից ճառով հանդես է գալիս Հոգևոր Ճեմարանի գրաբար լեզվի դասախոս Ս. Անթոսյանը։

Հանդիսության ընթացքում գործադրության է դրվում օրվա խորհուրդը նշող գեղարվեստական մի ծրագիր՝ բաղկացած խմբերգերից, մեներգերից և արտասանություններից։

Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Խ. Հակոբյանի դե-

կավարությամբ, հաջողությամբ կատարում է «Ես իմ անուշ Հայաստանի», «Մաղկիր ազատ իմ Հայրենիք» և «Հանդես է տոնական» խմբերգերը։

Բ դասարանի ուսանող Գ. Բունիաթյանը արտասանում է Ա. Իսահակյանի «Ոտք եմ դնում» քերթվածը, նույն դասարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը՝ Դանիել Վարուժանի «Վերածնություն»-ը և Գ դասարանի ուսանող Ժ. Գալֆաքյանը՝ Գ. Էմինի «Խոսիր Հայաստան»-ը։

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը ողջույնի և օրհնության խոսք է ասում ազգային-պետական մեծ տոնի 41-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով և հայրական իր ջերմ պատգամն ուղղելով Հոգևոր Ճեմարանի ուսանողության, խրատում է լինել որքան հավատի, գիտության, նույնքան և հայրենասիրության մարդ, որովհետև «Հայաստանյայց Եկեղեցին իր կյանքը և ճակատագիրը կապած է հայ ժողովուրդի կյանքին և ճակատագրին հետ և ան կենցանա ամբողջովին հայ ժողովուրդին հետ, զի Հայ Եկեղեցին ինքը հայ ժողովուրդն է»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս օրհնում է Հայրենի աշխարհն ու նրա տոնը, մեր շինարար ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի համայն աշխարհում և բոլոր հայ երդիկների տակ։

Հանդիսությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով։